ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 հոկտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

146
(2626)

100 դրամ

Քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 112



Օրերս Ալավերդի խոշորացված համայնքում նորընտիր ավագանու անդրանիկ նիստն էր գումարվել, որի ժամանակ «Ապրելու երկիր» կուսակցության թեկնածուն համայնքապետ ընտրվեց: Ընտրության արդյունքներից ու հետընտրական «Ապրելու երկիր»-ՀԱԿ կոալիցիայից դժգոհ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու անդամներն ավագանու առաջին նիստը բոյկոտել ու չէին ներկայացել: Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու նրա յուրայինները մեկ անգամ չէ, որ խոսել, քննադատել ու դատափետել են խորհրդարանական ընդդիմության՝ մայիսից սկսած բոյկոտը՝ ասելով, թե ընդդիմությունն ԱԺ նիստերի մասնակցելով էլ կարող է իր բողոքն ու ցասումը տեղ հասցնել: Եթե խորհրդարանական ընդդիմության բոյկոտը պատճառաբանված է, լուրջ հիմքեր ունի, ապա ՔՊ-ի՝ Ալավերդիում համայնքապետ ընտրելու նիստին չմասնակցելը պարզապես երեխայական կամակորություն է: Ժողովրդավարության մասին օրուգիշեր ասք ասող իշխանությունը, փաստորեն, դեմոկրատիան միայն իրեն հարմար ձեւով ու սեփական ափսեի մեջ է պատկերացնում, իսկ ընդդիմադիրների՝ ԱԺ նիստերը բոյկոտելը քննադատելով՝ Փաշինյանը հերթական անգամ շեղել ու խաբել է մարդկանց:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ օրերս պարգեւավճար են ստացել ոչ միայն խորհրդարանի մեծամասնության՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները, այլ նաեւ նրանց օգնականները, գործավարներն ու փորձագետները: Մեր տեղեկություններով՝ ո՛չ ընդդիմադիր «Հայաստան» ու «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավորները, ո՛չ էլ նրանց օգնականները պարգեւավճարներ չեն ստացել: Ընդդիմադիր խմբակցությունների գործավարներն ու փորձագետները նույնպես պարգեւավճարի չեն արժանացել: Ինչո՞վ է պայմանավորված նման վերաբերմունքը, եւ ի՞նչ սկզբունքով է առաջնորդվել ԱԺ նախագահութունը: Հարցն ԱԺ նախագահի մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանին ուղղեցինք: «Քանի որ պատգամավորները չեն գալիս աշխատանքի, իրենց օգնականները հայեցողական պաշտոնի մարդիկ են: Նրանք, ենթարկվելով պատգամավորներին, աշխատանքի չեն գալիս: Հաշվի առնելով պատգամավորների ու նրանց օգնականների բացակաները՝ որոշվել է, որ պարգեւավճար են ստանալու միայն նրանք, որ պատշաճ կերպով աշխատանքի են եկել»,- ի պատասխան մեր հարցին՝ ասաց Խաչատրյանը: Ի՞նչ է ստացվում. օրվա իշխանությունն անգամ պատգամավորների՝ առանց այն էլ ոչ բարձր աշխատավարձ ստացող օգնականների դեպքում է «իմ ու քո անում», մարդկանց սեւերի ու սպիտակների բաժանում: Հավելենք, որ կան ՔՊ-ական շատ պատգամավորների օգնականներ, որոնք ամիսներով աշխատանքի չեն հաճախում, նրանց դռները կողպված են, բայց քանի որ իշխանական պատգամավորի օգնական են, նաեւ պարգեւատրվում են՝ աշխատանքի չգալու համար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Ազգային անվտանգության ծառայության նախկին պետի տեղակալ Գրիշա Հարությունյանի դատավոր դստեր գործը կքննի Ազգային անվտանգության ծառայությունը, եւ դատելով իրավիճակից՝ առաջիկայում դատավոր Անի Հարությունյանը կհրավիրվի ԱԱԾ՝ հարցաքննության: Դատավորը եւ իր մտերիմ շրջապատը սպասում են գործով քննության ընթացքին, որպեսզի հասկանան, թե որտեղից է «գալիս քամին», եւ այս քրեական հետապնդմամբ ինչ են ուզում հասկացնել դատավորին: Նկատենք, որ Անի Հարությունյանը Դատական դեպարտամենտի նախկին ղեկավար Կարեն Փոլադյանի եղբոր՝ Սնանկության դատարանի դատավոր Տիգրան Փոլադյանի կինն է: Հիշեցնենք, որ 2022 թվականի հոկտեմբերի 12-ին գլխավոր դատախազի տեղակալի կողմից որոշում է կայացվել դատավոր Ա.Հ.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ դատական իշխանության մարմնի պաշտոնատար անձի կողմից հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացմանն օժանդակելու, ինչպես նաեւ դատավոր Ա.Հ.-ի կողմից նույն չափերով գույքի չհայտարարագրմամբ զուգորդված հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու համար:



Երեւանի քաղաքապետարանի նկատմամբ վարույթ է հարուցվել քաղաքապետարանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով: Վարույթ հարուցող մարմինը մրցակցության պաշտպանության հանձնաժողովն է: Պարզվում է՝ քաղաքապետարանից պահանջվել է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ինքնակամ կառույցների օրինականացման դիմումների վերաբերյալ տեղեկատվություն, «Քաղաքաշինություն» ընկերության եւ քաղաքապետարանի միջեւ կնքված բոլոր գործող պայմանագրերի պատճենները: Բացի այս, քաղաքապետարանը պետք է հանձնաժողովին ներկայացներ նաեւ Երեւանի քաղաքապետարանի կողմից «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին 2018 թվականի հունվարի 1-ից մինչ օրս տրամադրված ֆինանսավորումների եւ կատարողականների վերաբերյալ տեղեկատվություն: Այս տվյալները փոխանցելու համար քաղաքապետարանին տրվել է ժամանակ՝ 5 աշխատանքային օր, սակայն քաղաքապետարանը պահանջված տեղեկատվությունը չի ներկայացրել սահմանված ժամկետում: Ըստ հանձնաժողովի՝ քաղաքապետարանի վարքագիծն առերեւույթ պարունակում է պետական մարմնի պարտականության խախտման հատկանիշներ: Ավելին՝ հանձնաժողովն այս դեպքում իրավասու է տնտեսվարող սուբյեկտներին, պետական մարմիններին եւ դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք: Նկատենք, որ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի ղեկավար Գեղամ Գեւորգյանը Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանի մտերիմն է, իսկ այս ստուգմամբ ինչ էլ պարզվի, վերաբերելու է նախկին քաղաքապետ Հայկ Մարությանին. չէ՞ որ ինքնակամ շինություններն ապամոնտաժողը նախկին քաղաքապետ Հայկոն էր, ու եթե չարաշահումներ լինեն, նրա պաշտոնավարմանն են վերաբերելու:

ՄԻԱՎՈՐՈՒՄ

ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ «ԿԱՎԵՐՎԻ»

Բրյուսովի անվան լեզվաբանական պետական համալսարանի սոցիալական գիտությունների եւ սերվիսի ֆակուլտետի դեկան Յոլակ Ակոպյանն այն համոզմանն է, որ բուհերի միավորման հիմքում բացառապես քաղաքական նենթատեքստ է ընկած: Նա անթույլատրելի է համարում, որ, առանց իրենց՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ու ուսանողների հետ քննարկումների կամ զրույցների, կառավարությունը քնել-արթնացել է ու որոշել Բրյուսովի համալսարանը Մանկավարժական համալսարանի ու Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի հետ միավորել: «Բուհական համակարգն ավերում են, հետո նո՞ր ասեն՝ ինչու այսպես եղավ»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշում է նա:

-Պարոն Ակոպյան, Բրյուսովի անվան լեզուների համալսարանում դասապրոցեսը արդեն խաթարված է, ուսանողները համաձայն չեն տարածված այն լուրերի հետ կամ նախագծի հետ, ըստ որի՝ Բրյուսովի համալսարանը պետք է միանա Մանկավարժական համալսարանին եւ Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտին: Կառավարությունից մեկնաբանում են, որ սա դեռ հստակ չէ, հնարավոր է՝ փոփոխություններ կատարվեն, բայց նաեւ մեկնաբանել են, որ ուսանողները շտապել են: Ի՞նչ է իրականում կատարվում, ո՞րն է ուսանողների եւ ձեր հիմնական պահանջը:

-Առաջնահերթ շնորհակալ եմ հարցազրույցի եւ մեր միջոցառումները լուսաբանելու համար: Իրականում քիչ առաջ կրթության նախարարը ասուլիս էր տալիս եւ չհերքեց: Փաստորոն նման գործընթաց ընթանում է, եւ ոչ մեկ չի շտապել: Չնայած մեր կոչերին, որ ուսանողները գոնե այսօր դասերին ներկա գտնվեն, քանի որ վաղը նախատեսվում է գիտական խորհրդի նիստ անցկացնել, որտեղ հրավիրել ենք փոխվարչապետին, նախարարին մեր հարցերի պատասխանները տալու համար, բայց այս հորդորը ուսանողները չլսեցին եւ շարունակում են իրենց բողոքի ակցիան: Ուսանողները ինքնավար են, եւ ես պարտավոր եմ ամեն հարցում կանգնել ճշտի եւ ուսանողի կողքին:

-Ուսանողի համար ի՞նչ տարբերություն՝ կրթությունը կստանա Բրյուսովի համալսարանում, թե միավորված մեկ այլ համալսարանում, որը ուրիշ անուն կունենա:

-Ինձ թվում է՝ այդ հարցին ավելի լավ կպատասխանեն ուսանողները: Ես՝ որպես երկար տարիների մասնագետ, որ աշխատում է կրթության ոլորտում, գիտեմ, որ այս հանպատրաստի փոփոխությունները կբերեն քաոսի: Չկա որեւիցե տեսլական, անհասկանալի են պատճառաբանությունները, ուզում ես փաստեր բերել, սակայն չես հասկանում՝ ինչ են ասում: Ուսանողների 85 տոկոսը մանկավարժ չի դառնում, մնում է 15 տոկոսը: Եթե այդ 15 տոկոսով է հարց լուծվելու, այդ դեպքում կարող ենք համեմատել եւ տեսնել, որ համալսարանն է ավելի լավ արդյունք տվել: Եթե իրենց որակը ավելի լավ է, այդ 15 տոկոսին տարեք էնտեղ, իսկ եթե հակառակը, ապա իրենց բերեք այստեղ: Այն, որ երկրում կա բուհերի միավորման խնդիր, մեզ չի վերաբերում, մենք ունենք դիմելիության բավականին աճ: Վերջին տարին է, որ մեր դիմորդները նվազել են, սակայն այդքան քիչ չեն, քանի որ Հայաստանում 3-րդ բուհն ենք դիմելիության ցուցանիշով: Ես երբեւիցե չէի պատկերացնի, որ բուհից ծածուկ կարող են որոշում ընդունել: Եթե չլիներ հոգաբարձուների խորհրդի նիստը, այդ որոշումը կգնար կառավարություն, նոր մենք այդ մասին կիմանայինք:

-Հիմա հարցը այն է, թե ինչու են դեմ ուսանողները եւ դասախոսները այս միավորմանը. չէ՞ որ սովորողը եւ միավորվածում կսովորի, եւ չմիավորվածում, եւ նույնը դասախոսը երկու դեպքում էլ կդասավանդի:

-Նախ դեմ ենք, քանի որ անորոշությունների մեջ ենք: Ես ինքս պատրաստ եմ հրաժարվել իմ պաշտոնից, քանի որ սա արդեն սկզբունքային հարց է, անգամ քննարկվել է պաշտոնի հարցը: Ես չեմ պատկերացնում՝ ինչ է լինելու:

-Նախագիծը կներկայացնեն, եւ Դուք կիմանաք, թե ինչ կլինի:

-Այսինքն՝ կառավարության որոշումը ընդունվի, բուհական համակարգը տանք ավերենք ու չհասկանանք, նոր դրանից հետո հետ գնանք ու քննարկենք՝ ինչու արեցինք:

-Մի սեղանի շուրջ կնստեք եւ կքննարկեք խնդիրը:

-Մի սեղանի շուրջ նստում են նախապես՝ մինչեւ որոշում կայացնելը: Ժողովրդավարական երկիրը, իմ կարծիքով, դա է պահանջում:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՎԵՐԱՑՆՈՒՄ Է

Հայկական պատվիրակությունները վերջին շրջանում, համաձայնեք, բավական ակտիվ հանդիպումներ են ունենում միջազգային ամենատարբեր կառույցների ներկայացուցիչների հետ: Նրանք թեեւ մեծամասամբ Արեւմուտքը ներկայացնող անձինք կամ կազմակերպություններ են, բայց հայկական կողմը, միեւնույնն է, սպասում է, թե ռուսական կամ պրոռուսական ուժերը, կենտրոններն ու անհատներն ընդհուպ ինչ են ասելու: Իսկ մինչեւ Ռուսաստանը կամ աշխարհի այլ երկրներ, անհատներ, կազմակերպություններ կասեն կամ կանեն, Ադրբեջանը թե՛ ասում, թե՛ անում է:

Այս օրերին Աստանայում գտնվող ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը ՌԴ իր գործընկերոջ՝ Սերգեյ Լավրովի հետ հանդիպմանը նորից հույս է հայտնել, թե պաշտոնական Մոսկվան կօժանդակի ՀՀ տարածքից ադրբեջանական զորքերի դուրս բերման հարցում: Նույն այդ որպենորին, սակայն, ադրբեջանական զորքը կամ գուցե քաղաքացիական անձինք Հադրութում հերթական հայկական կոթողն են վերացնում՝ այդպիսով փորձելով վերացնել հայկականությունն ու հայկական հետքը: Բորենիների այդ ձեռագիրը իհարկե նոր չէ, պարզապես նրանք, ի տարբերություն մեզ, գործում ու իրենց հնարած պատմությունը փորձում են մոտեցնել ցանկալի իրականությանը:

ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ԲԱՔՎԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մոսկվան ուշադրության կենտրոնում է պահում Երեւանի եւ Բաքվի հարաբերությունների կարգավորման հարցը: Այս մասին Աստանայում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպմանն ասել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը:

«Բնականաբար, մենք ուշադրության կենտրոնում ենք պահում տարածաշրջանում իրավիճակի կարգավորման հետ կապված հարցերը: Հուսով եմ, որ մենք կօգտվենք այսօրվա հնարավորությունից եւ կքննարկենք բոլոր հարցերը»,-ասել է Պուտինը:

Նա նշել է, որ Ռուսաստանը շարունակում է մնալ Ադրբեջանի առաջատար առեւտրատնտեսական գործընկերներից մեկը: «Ապրանքաշրջանառությունն աճում է: Անցած տարի այն աճել է մոտ 14 տոկոսով: Այս տարի այն աճել է եւս յոթ տոկոսով: Մեր տնտեսական օպերատորները 4,5 մլրդ դոլար են ներդրել Ադրբեջանի տնտեսության մեջ»,- ասել է Պուտինը:

Իր հերթին Ալիեւը վստահեցրել է, որ Բաքուն պատրաստ է «երկարաժամկետ խաղաղության»: «Մենք հավատարիմ ենք երկարաժամկետ խաղաղությանը եւ կարծում ենք, որ առաջարկել ենք բավական կառուցողական թեզեր, որպեսզի վերջապես խաղաղություն ձեռք բերվի»,- հավելել է նա:

ԼՈՒՐԵՐ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԹԱՐՄԱՑՈՒՄ

Վերջին օրերին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կրկին հիշում է հայտնի Մադրիդյան սկզբունքները եւ նախկին իշխանություններին մեղադրում, թե վերջիններս, այդ ամենը որպես բանակցությունների հիմք ընդունելով, ճանաչել են Արցախը որպես Ադրբեջանի մաս: 1990- ականների վերջից մինչեւ 2020 -ի պատերազմը բանակցային սեղանին դրվել են կարգավորման 7 հիմնական տարբերակներ, որոնք այս ընթացքում տարբեր անվանումներ են ստացել: ArmLur.am-ը պարբերաբար կներկայացնի մինչեւ այս եղած սկզբունքներն ու հարցի կարգավորման տարբերակները: Այս անգամ ներկայացնում ենք հենց Մադրիդյան սկզբունքները: Այդ առաջարկները Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին ներկայացվել են 2007 ի նոյեմբերի 29 -ին Մադրիդում, այստեղից էլ անվանումը՝ Մադրիդյան սկզբունքներ: Այստեղ առաջին անգամ շրջանառության մեջ է դրվում Արցախի վերջնական կարգավիճակի հարցը հանրաքվեով որոշելու տարբերակը: Սկզբունքներում նշվում էր նաեւ, որ մինչեւ հանրաքվեով վերջնական կարգավիճակի որոշումը, այսինքն՝ միջանկյալ փուլում, Ղարաբաղի բնակիչները կունենան որոշակի իրավունքներ եւ արտոնություններ, օրինակ՝ կընտրեն սեփական իշխանություններին, կունենան սեփական դատարաններն ու կստանան միջազգային ֆինանսական աջակցություն՝ խաղաղ զարգացման համար: Երրորդ կետը վերաբերում էր Ղարաբաղին հարակից տարածքներին. նշվում էր, որ հայկական վերահսկողության տակ գտնվող բոլոր տարածքները պետք է վերադարձվեն Ադրբեջանին, բայց ոչ բոլորը միանգամից. Քարվաճառը, մասնավորապես, պետք է մնար անցումային հանձնաժողովի վերահսկողության տակ: Մադրիդյան սկզբունքներում նշվում էր նաեւ Ղարաբաղը Հայաստանի հետ կապող միջանցքի մասին, անդրադառնում էին նաեւ Ղարաբաղի շրջակա տարածքների ապառազմականացանը, խաղաղապահների տեղակայմանը, փախստականների վերադարձին, տրանսպորտային ուղիների ապաշրջափակմանն ու խաղաղության ապահովման համար անհրաժեշտ այլ քայլերի: Սակայն այս սկզբունքները չընդունվեցին, ավելին՝ Արցախը դեմ էր դրանց, իսկ Ադրբեջանի արձագանքից պարզ էր դառնում, որ անկախ կարգավիճակի հարցով հանրաքվեն Բաքուն բացառում է: Այսպիսով, հարցը կրկին մտավ փակուղի:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՆԱՄՔՈՎ ԹԱՔՑՆՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ այսօր՝ սեպտեմբերի 14-ին, գիտխորհրդի նիստ են պատրաստվում անցկացնել Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում, որին հրավիրել են մասնակցելու ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանին եւ ԲՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանին:

Հիշեցնենք, որ երեկվանից Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ուսանողները դժգոհում են. առանց իրենց ու դասախոսների կարծիքը հաշվի առնելու, կառավարությունը որոշել է միավորել Հայաստանի Հանրապետության պետական 3 բուհ՝ Երեւանի մանկավարժական համալսարանը, Բյրուսովի անվան լեզվաբանականն ու Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը:

Ի դեպ, լիազոր մարմնի ղեկավար Վահրամ Դումանյանը երեկ հաստատել է՝ կառավարությունը 3 բուհերը միավորելու ծրագիր ունի:

Թե ինչու են մինչ օրս նախագիծը խնամքով թաքցրել, հայտնի չէ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՔԱՐՏԵՐԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«ՄՏՍ Հայաստան» ընկերության վաճառքի մանրամասները պարզաբանելու ակնկալիքով «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ընկերություն՝ հետաքրքրվելով, թե ինչու է վաճառքի հանվել «Վիվա ՄՏՍ»-ը, որքան արժե ընկերության բաժնետոմսերի փաթեթը, ով կամ ովքեր են հավանական գնորդները, եւ երբ կկայանա առուվաճառքը: Մեր բոլոր հարցադրումների մեջ «ՄՏՍ Արմենիա» ընկերությունը առեւտրային գաղտնիք է տեսել ու չի հանրայնացնում ընկերության վաճառքին կամ արհեստական վաճառքին առնչվող հարցերը: Հավելենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվել էր նաեւ, թե Ռալֆ Յիրիկյանի հեռացումն ինչ առնչություն ունի վաճառքի գործընթացի հետ: Ինչպես հայտնի է, 2004 թվականից «Վիվա ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը նախորդ տարի հուլիսի 15-ին անակնկալ կերպով հեռացավ ընկերությունից: Տնօրեն նշանակվեց Արմեն Ավետիսյանը, որը ընկերության արդյունաբերական ավտոմատացման հարցերով փոխնախագահն էր: Ռալֆ Յիրիկյանի անակնկալ հեռացումն էլ «ՄՏՍ Հայաստանը» համարել է առեւտրային գաղտնիք եւ չի պատասխանել մեր հարցին: Ուշագրավ է, որ նույն՝ առեւտրային գաղտնիքի պատճառաբանությամբ «ՄՏՍ Հայաստան»-ը հրաժարվել է պատասխանել նաեւ կարեւորագույն այն հարցին, թե ինչպես են ադրբեջանցի հատուկ ծառայության աշխատակիցները կարողացել ձեռք բերել «Վիվա ՄՏՍ»-ի հեռախոսային քարտեր: Հիշեցնենք, որ 2020թ.-ի հուլիսի 24-ին՝ պատերազմից ամիսներ առաջ, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել էր, որ Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների աշխատակիցներն օգտագործում են ՀՀ տարբեր բջջային օպերատորների հեռախոսահամարներ եւ դրանցով զանգահարելով ՀՀ քաղաքացիներին՝ անկախ հետազոտություններ անցկացնելու պատրվակով (իբր կատարում են սոցհարցումներ ՀՀ-ում) հատկապես Ջինված ուժերում տիրող իրավիճակի վերաբերյալ հետախուզական բնույթի տեղեկություններ են ստանում: Մասնավորապես, նմանօրինակ հեռախոսազանգեր են արձանագրվել ՀՀ 094-39-75-95 եւ 093-52-72-08 բջջային հեռախոսահամարներից: «Ժողովուրդ» օրաթերթի այս հարցին «ՄՏՍ Հայաստան» ընկերությունը պատասխանել է՝ առեւտրային գաղտնիք է եւ չեն կարող ասել, թե նշված հեռախոսահամարները ում են վաճառվել կամ ում անունով են գրանցված:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը մեղադրել է Ռուսաստանին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերջին բախումները միտումնավոր հրահրելու համար Կովկասի տարածաշրջանում եւ դրանից դուրս իրավիճակն ապակայունացնելու նպատակով: Գործակալությունը նշում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ 2020 թվականից ի վեր ամենասարսափելի մարտերը տեղի են ունեցել սեպտեմբերին, դրանց հետեւանքով զոհվել է ավելի քան 200 մարդ: France 2 հեռուստաընկերության հետ զրույցում Մակրոնն ասել է, որ Մոսկվան վերջին ամիսներին լարվածություն է բորբոքել՝ հօգուտ Ադրբեջանի:

ԵԼՈՒՅԹ՝ ԵԽԽՎ-ՈՒՄ

ԱՆՀՆԱՐ Է ԽՈՍԵԼ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության մշտական անդամ Վլադիմիր Վարդանյանը եւ ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար Ռուբեն Ռուբինյանը ելույթ են ունեցել ԵԽԽՎ աշնանային նստաշրջանում:

ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության մշտական անդամ Վլադիմիր Վարդանյանը իր խոսքում նշել է. «Ցանկանում եմ անդրադառնալ պարոն Սամադ Սեիդովի վեր հանած հարցերին: Պարոն Սեիդով, Դուք շատ բարդ դեր եք խաղում: Դուք նույնիսկ չեք կարող պատկերացնել, թե որքան լավ եմ ես Ձեզ հասկանում, թե որքան դժվար է տարիներ շարունակ պաշտպանել չարը: Ամեն դեպքում, դա Ձեր ընտրությունն է, բայց այս կազմակերպությունն արժեքների կազմակերպություն է, ըստ այդմ՝ եկեք խոսենք արժեքների մասին, քանզի կարեւոր է, երբ մենք խոսում ենք պարտավորությունների մասին:

Պարոն Սեիդով, երբ Հայաստանն ու Ադրբեջանն անդամակցեցին այս հարգարժան կազմակերպությանը, մենք պարտավորություն ստանձնեցինք զերծ մնալ քաղաքական խնդիրների լուծման հարցում ուժ կամ ուժի սպառնալիքի կիրառումից, սակայն այդ պատահեց 2020թ., եւ ոչ ոք չարձագանքեց: Մենք գիտեինք, որ այս օրը գալու է: Այսօր, բարեբախտաբար, ձեզանից շատերը հասկանում են, թե ինչ է կատարվում այնտեղ:

Երբ պարոն Սամադ Սեիդովը խոսում է Ադրբեջանում հայկական ուժերի առկայության մասին, ուզում եմ ասել, որ դա ամբողջովին սուտ է: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրավունք ունի պաշտպանել իր էքզիստենցիալ գոյությունը:

Նայեք, թե ինչ է կատարվում. մասնատում, նվաստացում, դիտավորյալ սպանություն: Համենայնդեպս, մենք ինքնապաշտպանության իրավունք ունենք, եւ նրանք փորձում են իրացնել այդ իրավունքը»:

ԵԽԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար Ռուբեն Ռուբինյանը նույնպես անդրադարձել է ադրբեջանական ագրեսիային: «Իսկապես, իմ երկիրը, իմ ժողովրդավար երկիրը վերջերս հարձակման է ենթարկվել իր ավտորիտար հարեւանի կողմից: Հարձակումը եղել է բոլորովին անհիմն եւ չարդարացված: Խաղաղ բնակիչներ են զոհվել: Վնասվել են բնակավայրեր, քաղաքացիական ենթակառուցվածքներ: Պարոն Գավանն այդ ամենը ներկայացրեց:

Ինչո՞ւ նման բան տեղի ունեցավ: Տեղի ունեցավ, քանի որ ագրեսորը նախկինում չդատապարտվեց: Վերջին նիստի ժամանակ այստեղ ես խոսում էի Հայաստանի ինքնիշխան տարածք ադրբեջանական հերթական ներխուժման մասին, որը տեղի էր ունեցել 2021թ.: Ես խոսում էի հայ ռազմագերիների մասին, որոնք դեռ պահվում են Ադրբեջանում: Նրանք մինչ օրս պահվում են այնտեղ: Հիմա՝ մի քանի ամիս անց, ունենք նոր ագրեսիա, նոր օկուպացիա, նոր ռազմագերիներ, նրանցից ոմանք սպանվել են, եւ կան կադրեր, որտեղ երեւում է, որ նրանք գերեվարվելուց անմիջապես հետո մահապատժի են ենթարկվում ադրբեջանցիների կողմից: Այս ամենը տեղի ունեցավ, քանի որ ադրբեջանցիները նախկինում չեն դատապարտվել:

Այս կազմակերպությունում խաղաղության մասին խոսելու անհրաժեշտությունից ելնելով՝ ցանկանում եմ տեղեկացնել Ձեզ, որ ԵԽԽՎ նախագահ պարոն Քոքսն ինձ եւ պարոն Սեիդովին հրավիրել էր հանդիպել Փարիզում Մշտադիտարկման հանձնաժողովի նիստի շրջանակում: Այդ հանդիպումը նախատեսված էր սեպտեմբերի 15-ին: Ինչո՞ւ այն տեղի չունեցավ: Շատ պարզ պատճառով. հանդիպումից երկու օր առաջ իմ երկիրը հարձակման ենթարկվեց Ադրբեջանի կողմից, ու ես չգնացի Փարիզ:

Հարգելի՛ գործընկերներ, խաղաղության մասին խոսել հնարավոր է, երբ քո գործընկերները ցանկանում են խոսել խաղաղության մասին: Անհնար է խոսել խաղաղության մասին, մինչ նրանք կրակում են քեզ վրա, մինչ նրանք օկուպացնում են քո տարածքը: Անհնար է:

Հասկանում եմ, որ մեր ընկերներից շատերը չեն ցանկանում այս կամ այն կողմը բռնել, երբ խոսքը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: Բարդ է: Հասկանում եմ:

Բայց սա այլ է: Սա այն դեպքն է, որ ավտորիտար իշխանությունը հարձակվում է իր դեմոկրատ հարեւանի վրա եւ օկուպացնում է նրա տարածքը. դա պետք է դատապարտվի: Ադրբեջանական զորքերը պետք է անհապաղ հեռանան հայկական տարածքից, իսկ հայ ռազմագերիները պետք է ազատ արձակվեն»,- ասել է Ռուբեն Ռուբինյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորընտիր նախագահ Վահագն Հովակիմյանը ԿԸՀ անդամություն է ստացել նաեւ իր իսկ քվեով:

Բանն այն է, որ պատգամավորների թվում, որ ընտրել են ԿԸՀ նոր անդամներին, նաեւ Վահագն Հովակիմյանն է եղել: Այսինքն՝ Հովակիմյանն ինքն իր թեկնածությանը կողմ է քվերակել, ինչը ակներեւ շահերի բախում կարող է առաջացնել:

Պատգամավոր Հովակիմյանը, ըստ տրամաբանության, չի կարող ԿԸՀ անդամի թեկնածու Հովակիմյանին ընտրել: Ընտրելու դեպքում էլ, պարզ է, ինքն իրեն դեմ չէր քվեարկի: Հարցի առնչությամբ ArmLur.am-ը կապ հաստատեց ԿԸՀ նախկին նախագահ Տիգրան Մուկուչյանի հետ, նա, սակայն, հրաժարվեց մեկնաբանել:

ՍԵՒԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԺԱՄԱՆԵԼ Է ՂԱԶԱԽՍՏԱՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով ժամանել է Ղազախստանի Հանրապետություն:

Վարչապետին Աստանայի միջազգային օդանավակայանում դիմավորել է Ղազախստանի առաջին փոխվարչապետ Ռոման Սկլյառը:

Վարչապետն Աստանայում կմասնակցի ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստին:

Մանրամասներ

Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հոկտեմբերի 13-ին Երեւանում հանդիպել է Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանի գլխավորած պատվիրակության հետ: Պատվիրակության կազմում էին նաեւ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը, նախագահի խորհրդական Մասիս Մայիլյանը, Հայաստանում Արցախի մշտական ներկայացուցիչ Սերգեյ Ղազարյանը եւ Արցախի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Վահրամ Բալայանը:

Ինչպես հայտնում են Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի գրասենյակից, հանդիպմանն Արմեն Գրիգորյանը մանրամասներ է ներկայացրել բոլոր ուղղություններով ընթացող բանակցային գործընթացից, այնուհետեւ կողմերը մտքեր են փոխանակել եւ գնահատականներ ներկայացրել Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված անվտանգության իրավիճակի վերաբերյալ:

ՎՃԻՌ

«ԷՐԵԲՈՒՆԻ ՊԼԱԶԱ» ՆԵՐԽՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆ

«Էրեբունի պլազա» ներխուժած անձի գործով դատարանը որոշում է կայացրել: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ սեպտեմբերի 22-ին դատավոր Դավիթ Բալայանը որոշել է Արթուր Թորոսյանին ազատել՝ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերով դատապարտվածությունից եւ դաժից ու նրա նկատմամբ այդ արարքի կատարման համար կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հոգեբուժական հիվանդանոցի ընդհանուր տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում:

Որոշում է կայացվել իրեղեն ապացույց ճանաչված САЙГА-12к մոդելի, 12 տրամաչափի «16600022» համարի որսորդական ողորկափող ինքնալից կարաբինն իր պահեստատուփով, այդ հրազենի թղթե արկղը, 14 հատ 12 տրամաչափի որսորդական փամփուշտները, 2 հատ փողային վարդակը, 1 հատ պտուտակահանը, հրազենի մաքրման պարագաները եւ շամփուրը հանձնել ՀՀ ոստիկանությանն ի տնօրինություն, 12 տրամաչափի որսորդական ողորկափող զենքերից կրակվելու համար նախատեսված գործարանային արտադրության փամփուշտի կրակված պարկուճները, խից-կոնտեյներները, բեկորները /կրակված կոտորակները/ եւ դեպքի վայրից առգրավված պարկը ոչնչացնել, իսկ «Էրեբունի պլազա» ՍՊԸ-ին պատկանող փափուկ կահույքը, շրիշակը, սյան երեսպատված շագանակագույն փայտաթելքի իրանից հարթակներն ու առաստաղը թողնել «Էրեբունի պլազա» ՍՊԸ-ն տնօրինությանը: Որոշում է կայացվել Արթուր Թորոսյանի նկատմամբ կիրառված անվտանգության միջոցը՝ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը, թողնել ուժի մեջ մինչեւ հարկադրանքի միջոցի կիրառման սկիզբը:

Ասել է թե՝ դատարանը որոշել է՝ անձը անմեղսունակ է եւ պետք է բուժվի:

2020 թվականի հունվարի 23-ին՝ ժամը 14:40-ին, ոստիկանությունում ահազանգ էր ստացվել, որ «Էրեբունի պլազա» հյուրանոցում զինված անձ կա, որը կրակում է: Անմիջապես դեպքի վայր էին մեկնել ոստիկանության ղեկավար կազմն ու օպերատիվ խմբեր: «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոնում կրակոցներ արձակած 33-ամյա Արթուր Թորոսյանը մնասազերծվել էր եւ տեղափոխվել ոստիկանություն:

Միջադեպի առթիվ հարուցվել էր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածի (պատանդ վերցնելը) 2 մասի 3-րդ եւ 7-րդ կետով, 235-րդ (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) հոդվածի 1-ին մասի եւ 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) հատկանիշներով: Այս գործը դատարանում է, եւ այն քննում է դատավոր Դավիթ Բալայանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ՀՀ քննչական կոմիտեն Աժ պատգամավոր Հայկ Սարգսյանի հորը՝ Զարեհ Սարգսյանին, հրավիրել է քննչական մարմին եւ քրեական վարույթով ճանաչել տուժող. քրեական վարույթով նաաքննությունը շարունակվում է: Այս մասին տեղեկությունը մեզ հետ զրույցում հաստատեց Զարեհ Սարգսյանը:

Ի դեպ, դեկտմեբրի 6-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հայրը՝ Զարեհ Սարգսյանը, իրավապահներին բացատրություն է տվել Արաբկիրում տեղի ունեցած պայթյունի գործով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝նա իրավապահներին հայտնել է, որ չի կարող ասել՝ արդյոք կատարվածն իրենց հետ կապ ունի, թե ոչ: «Թող իրավապահները պարզեն»,- ասել է Զարեհ Սարգսյանը:

Նկատենք, որ պայթյունը եղել էր Սարգսյանին պատկանող Երեւանի Նաիրի Զարյան փողոցում գտնվող խանութ-յուղման կետի տարածքում:

Այդ տարածքից փոքր-ինչ հեռավորության վրա է գտնվում պատգամավորի հայրական տունը, ու համադրելով բոլոր հանգամանքները՝ հարց է առաջանում՝ պայթյունն ուղղակի պատահականություն է եղել, թե ՔՊ-ական պագամավորի դեմ է ուղղված. գուցե մարդիկ կան, որոնք փորձել են ինչ-որ բան հասկացնել պատգամավորին կամ նրա ընտանիքի անդամներից որեւէ մեկին: Բոլոր հանգամանքները, հուսանք, իրավապահները կպարզեն:

Նկատենք, որ վերոնշյալ դեպքից տասն օր առաջ Aravot.am-ը գրել էր՝էլեկտրոնային հաղորդագրության միջոցով անհայտ քաղաքացին ԱԻՆ-ին ասել է, թե ինքը խոտաբիչն է եւ պատրաստ է պայթեցնել Հայաստանի բոլոր գործարանները, մետրոպոլիտենի կայարանները, օդանավակայանը, նաեւ «Սուրմալու» առեւտրի կենտրոնը: ԱԻՆ-ին էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկած անհայտ անձը նաեւ գրել է, որ կկտրի բոլոր պատգամավորների, պաշտոնյաների կոկորդը, եւ սա կանխելու համար իրեն պետք է փոխանցել մի քանի «բիթքոյններ»: Չի բացառվում, որ վերոնշյալ դեպքերը մեկը մյուսի հետ կապ ունեն:

ArmLur.am-ը ավելի վաղ էր տեղեկացրել՝ ոստիկանությունում ահազանգ է ստացվել, որ ժամը 05.00-ին Կոմիտասի պողոտայի եւ Փափազյան փողոցի խաչմերուկից պայթյունի ձայն է լսվել: Պայթյունից վնասվել էր Ն. Զարյան փողոցի խանութ-յուղման կետի դռան ապակին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Դատախազությունը 2022թ.-ի սեպտեմբերի 22-ին Հակակոռուպցիոն դատարան էր ներկայացրել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը, որը 2022 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Նշված հայցադիմումով ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին Կոտայքի մարզի Հրազդան համայնքի նախկին ղեկավար Արամ Ռազմիկի Դանիելյանից եւ վերջինիս փոխկապակցված երկու անձից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել հետեւյալը՝

- 11 անշարժ գույք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում, մասնավորապես՝ Երեւան քաղաքում, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերում, 3 տրանսպորտային միջոց, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց նվազագույն շուկայական արժեքները, որն ընդհանուր հաշվարկով կազմում է ավելի քան 653 մլն 399 հազար դրամ,
- մասնակցություններ 2 ՍՊ ընկերությունում,
- 156 մլն 615 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում եւ հնարավոր չէ բռնագանձել՝ հիմք ընդունելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումը:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից շարունակվում է ՀՀ Հակակոռուպցիոն դատարան ապօրինի գույքի բռնագանձման հայցադիմումներ ներկայացնելու գործընթացն այն գործերով, որոնցով դատարանի որոշումներով արդեն իսկ կիրառվել են հայցի նախնական ապահովման միջոցներ:

ԼՈՒՐԵՐ

ԾԵԾԿՐՏՈՒՔ՝ ԱՅԳՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Բրար Հարջինդեր Սինգհին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2020 թվականի հուլիսի 31-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Երեւան քաղաքի «Օղակաձեւ» այգու 6-րդ հատվածում նախկին ընկերուհու՝ Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի Ջասմիթ Բալդեւ Սինգհի Կորի հետ միջանձնային հարցեր պարզելու ընթացքում դաստակին եղած մետաղյա թեւնոցով դիտավորությամբ 6-7 անգամ հարվածներ է հասցրել Ջասմիթ Կորի գլխի շրջանում՝ վերջինիս պատճառելով ֆիզիկական ցավ:

ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԵՐ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Աժ «Հայաստան» խմբակցության ղեկավար, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի՝ ապօրինի գույքի բռնագանձման գործը, Երեւանի նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի, Աժ նախկին պատգամավոր Մանվել Գրիգորյանի դեմ Գլխավոր դատախազության ապօրինի գույքի բռնագանձման գործերը Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանից տեղափոխվեցին Հակակոռուպցիոն դատարան:

Ի դեպ, գրել էինք, որ «Գլխավոր դատախազությունն ու ԲԴԽ-ն ներքին գզվռտոցի մեջ են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջին շրջանում Գլխավոր դատախազությունը մեկը մյուսի հետեւից դատարան է ուղարկում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասով նախկին պաշտոնատար անձանց գործերը: Դատարանը դատախազության պահանջը վարույթ է ընդունում, որոշում, թե նախկին պաշտոնյաների գույքի վերաբերյալ գործերը Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական գործեր քննող որ դատավորները պետք է քննեն:

Այսինքն՝ գործը հասել է դատարան, սակայն դատարանում նիստերը չեն կայանում:

Ինչո՞ւ չեն կայանում նիստերը. պարզաբանման համար «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Բարձրագույն դատական խորհուրդ, որտեղից մեզ պատասխանեցին. «Գործերը քնեցնելու որեւէ միտում չկա, Հակակոռուպցիոն դատարանը նոր է ձեւավորվել, եւ, հետեւաբար, գործերը վարույթ ընդունելուց հետո սահմանված ժամկետներում կնշանակվեն նաեւ դատական նիստերի օրերը»:

Պարզվում է, որ բոլոր գործերը չէ, որ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարաններն են քննելու: Մի մասը տեղափոխվելու են Հակակոռուպցիոն դատարան, որտեղ նոր նշանակված դատավորները դեռ կնիք ստանալու ու աշխատասենյակ ունենալու հարց են լուծում: Ի՞նչ է ստացվում. դեռեւս 2018թ.-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից քանիցս շրջանառված թեզը, թե «թալանը կոպեկ առ կոպեկ» հետ են բերելու, դեռեւս համալիր գործընթացի չի վերածվում, ավելին՝ ձգձգվում ու դանդաղում է: Հիմա էլ կնիք չունեն»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 45 դեպք, որոնցից 7-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 30-ին Հայաստանի պաշտպանության նախարարությունը հայտարարություն է տարածել, որով քաղաքացիներին կոչ է արել դադարեցնել զինծառայողների համար սննդի, հագուստի, կենցաղային իրերի, տեխնիկական միջոցների հավաքագրումներն ու դրամահավաքները: Այդ հայտարարությունից կարող է տպավորություն ստեղծել, որ Հայաստանի առաջնագիծը պաշտպանող զինծառայողները սահմանագոտին պաշտպանության համար սննդի, հագուստի, կենցաղային իրերի, տեխնիկական միջոցների կարիք չունեն, Պաշտպանության նախարարությունը նրանց այդ ամենով ապահովել է: Իմ վաղեմի ծանոթը՝ Բերդ քաղաքի բնակիչ Դավիթ Թումանյանը, ներկայումս եռամսյա վարժական հավաքի է, պաշտպանում է Վարդենիսի առաջնագիծը: Բերդ քաղաքից հայտնեցին, որ մոտ մեկ ամիս առաջ Դ. Թումանյանը կարճ ժամանակով վերադարձել է հայրենի Բերդ, Բերդ խոշորացված համայնքի գյուղերից գնել լապատկայի, բահի տասնյակ փայտե կոթեր եւ դրանք տեղափոխել իր ծառայության վայր: Մի քանի օր առաջ նա նորից տուն է վերադարձել, Բերդ քաղաքի տնտեսական խանութից առաջնագծի իրենց դիրքի համար սղոցներ, կացիններ, մուրճեր վերցրել: Խանութատերը, իմանալով, թե ինչ նպատակով է նա այդ գործիքները գնում, դրանց համար փող չի վերցրել, նաեւ իր խանութից առաջնագծի կահավորման համար նման գործիքներ է նվիրել՝ դրանք հանձնելով առաջնագիծը պաշտպանող, սահմանագոտի վերադարձող Դ. Թումանյանին:

ԸՆԴԴԵՄ ԱՎՏՈԴՊՐՈՑԻ

Վասակ Լեւոնի Պապյանը 2022 թվականի հուլիսի 12-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ «Տավուշի ավտոդպրոց» ՍՊԸ-ի, հարկադիր պարապուրդի գումարի բռնագանձման պահանջի մասին: 2022 թ. հուլիսի 18-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: 2022թ. օգոստոսի 31-ին դատարան է մուտքագրվել պատասխանողի՝ Տավուշի ավտոդպրոց» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Փայտյանի պատասխանը, համաձայն որի՝ վերջինս խնդրել է Վասակ Պապյանի հայցը՝ընդդեմ «Տավուշի ավտոդպրոց» ՍՊԸ-ի, հարկադիր պարապուրդի գումարի բռնագանձման պահանջի մասին, մերժել: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Սարգիս Արմենակյանի նախագահությամբ հոկտեմբերի 13-ին Տավուշի մարզի աաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում սույն քաղաքացիական գործով նախնական դատական նիստ է կայացել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ՀԵՏԱՊՆԴՎՈՂԸ»

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՏԿԱՌԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Վարչական դատարանի դատավոր Անի Հարությունյանը թվով 16 անշարժ գույքի սեփականատեր է: Նշենք, որ դրանց մեծ մասը գտնվում է Երեւանի կենտրոնում: Օրինակ, նա 2021 թվականի տարեկան հայտարարագրում նշել է, որ ունի երկու բնակարան, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի 10 տարածք, երեք ավտոկայանատեղի, երեքն էլ՝ Երեւանի կենտրոնում, մեկ ամառանոց՝ Արզնիում, որը նա գնել է 2020 թվականին: Դատավորի շարժական գույքը մեկն է՝ 2016 թվականի արտադրության BMW, որը նա գնել է 2017 թվականին: Բացի այս, Անի Հարությունյանը 27 մլն 900 հազար դրամի չափով բաժնային արժեթղթեր ունի, որոնք նա նվեր է ստացել 2010 թվականին:

Նախորդ տարեվերջին դատավորի փոխառությունները կազմել են 39 մլն 696 հազար դրամ, 178 հազար 400 դոլար, որից 100 հազար դոլարի պարտապանը Գեւորգ Նարինյանն է: Խոսքը իր գործընկեր դատավոր Գեւորգ Նարինյանի մասին է, որին Հարությունյանը պարտքով գումար է տվել: Ի դեպ, այս մասին հայտարարագրում ներկայացրածը դատախազությունը կասկածի տակ է դրել՝ համարելով, որ դատավորը կեղծ տվյալներ է ներկայացրել: ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հոկտեմբերի 11-ին միջնորդություն էր ներկայացրել Բարձրագույն դատական խորհուրդ՝ դատավորի լիազորությունների իրականացման առնչությամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ: ԲԴԽ-ն գլխավոր դատախազության՝ դատավորին անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությունը մերժել էր: Հոկտեմբերի 12-ին գլխավոր դատախազի տեղակալը որոշում է կայացրել դատավոր Անի Հարությունյանի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում: Թե ինչ ավարտ կունենա այս գործընթացը, ցույց կտա ժամանակը: Իսկ մինչ այդ տեղեկացնենք, որ բանկային հաշվին մնացորդը կազմել է 10 հազար դոլար եւ 100 հազար դրամ: Դատավորը ունեցել է 23 մլն դրամի եւ 110 հազար եվրոյի չափ կանխիկ գումար: Դատավորի 2021 թվականի եկամուտը կազմել է ընդհանուր կազմել է 46 մլն 656 հազար դրամ: Սեփական աշխատավարձը կազմել է ընդհանուր 8 մլն 561 հազար դրամ, ամսական՝713 հազար դրամ: Դատավորը վարձակալության դիմաց ստացել է վճարներ, օրինակ «Փարիզ» հոթելից ստացել է 20 մլն 334 հազար դրամ, «Արեգակ ՈՒՎԿ»-ից՝ 10 մլն 800 հազար դրամ, «Ութ յոթ ութ յոթ» տեղեկատուից՝ 4 մլն 270 հազար դրամ, «Գրիար սպասարկում»-ից՝ 1 մլն 80 հազար դրամ, ՀՀ ֆինանսների նախարարությունից՝ 1 մլն 610 հազար դրամ:

Ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 37 մլն 619 հազար դրամ եւ 37 հազար դոլար: Դատավորը ներկայացրել է նաեւ ծախսերի հայտարարագիր, որտեղ նշված է, որ վարկային պարտավորություններն է մարել: Խոսքը 11 մլն 740 հազար դրամի եւ 23 հազար 800 դոլարի մասին է:

Նշենք, որ Անի Հարությունյանը Սերժ Սարգսյանի մանկական ընկերոջ դուստրն է: Նրա հայրը ՀՀ ազգային անվտանգության ծառայության նախկին պետի տեղակալ Գրիշա Հարությունյանն է, իսկ նրա հորաքրոջ որդին ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պողոսյանն է:

ՍՅՈՒՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

10–ՕՐՅԱ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

Հայաստանում հոկտեմբերի 13-ից մեկնարկել է 10-օրյա մարդահամարը:

Սա Հայաստանի անկախության պատմության մեջ երրորդ մարդահամարն է:

Սրանից առաջ Հայաստանում մարդահամար անցկացվել է 2001 եւ 2011 թվականներին:

Այս տարի առաջին անգամ մարդահամարի համար օգտագործվելու է համակցված մեթոդը: Հիմնական կարեւոր չորթվերը ստացվելու են վարչական ռեգիստրից՝ ազգություն, քաղաքացիություն, տարիք, հետո հարցեր են ուղղվելու նաեւ քաղաքացիներին: Կատարվելու է ընտրանքային հարցում՝ 25 տոկոսի չափով, այսինքն՝ հաշվարարն այցելելու է յուրաքանչյուր բնակավայրի յուրաքանչյուր 4-րդ տնային տնտեսություն, պլանշետի միջոցով լրացնելու է էլեկտրոնային հարցաթերթ: Առաջին անգամ է, որ այն անցկացվում է էլեկտրոնային եղանակով: Հարցերն ուղղված են լինելու տվյալ պահին տվյալ հասցեում բնակվող չափահաս անձին:

Կհավաքագրվեն տվյալներ նաեւ մարդկանց կրթության, առողջության, աշխատանքի, բնակպայմանների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ ներառված է լինելու 39 հիմնական հարց եւ տնային տնտեսության բնակպայմանների վերաբերյալ եւս 5 հարց: Մարդահամարի արդյունքները պատրաստ կլինեն 1 տարուց:

25–ՕՐՅԱ ՀԱՎԱՔՆԵՐ

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հայտարարեց, որ հրաժարվում են պահեստազորայինների եռամսյա վարժական հավաքներից, փոխարենը այն կտեւի 25 օր: Պապիկյանն այս մասին հայտարարեց հոկտեմբերի 13-ի հերթական նիստի ժամանակ:

«Մեր նպատակը հետեւյալն է. մենք հրաժարվում ենք եռամսյա հավաքներից, հավաքները դառնում են 25-օրյա: 21 օրը հիմնական ծառայությունն է, որից 7 օրը քաղաքացի անցնում է պատրաստություն, 14 օր անցկացնում է մարտական հերթապահություն:

Շուտով կարգը կլինի, մենք դրա մասին կհայտարարենք: Առաջիկա հավաքները լինելու են 25-օրյա, այլեւս հրաժարվելու ենք եռամսյա հավաքներից, բայց սա լինելու է պարտադիր Հայաստանի Հանրապետության բոլոր զինապարտ քաղաքացիների համար: Այստեղ մեծ ուշադրություն կխնդրեմ իրավապահ մարմիններից, որովհետեւ շատ են խոսակցությունները, որ մշտապես շեշտը դրվում է այն մարդկանց վրա, ովքեր միշտ պատրաստակամ են եղել, բայց սա պետք է լինի պարտադիր բոլորի համար»,- ընդգծեց Պապիկյանը:

Պաշտպանության նախարարը շեշտեց, որ զինապարտներին հնարավորություն է ընձեռվելու ընտրել հավաքին մասնակցելու ժամկետը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր հերթին ասաց, որ շատ երկար ժամանակ պահեստազորը չէր հրավիրվել եռամսյա հավաքների մասնակցության, եւ կառավարությունը որոշեց իրականացնել եռամսյա հավաքների քաղաքականությունը:

«Այդ ընթացքում պարզվեց, որ խնդրահարույց է, քանի որ մարդիկ աշխատում են: Որոշեցինք հրավիրել այն մարդկանց, որոնք աշխատանք չունեին՝ դրանով լուծելով սոցիալական խնդիր, քանի որ եռամսյա հավաքի մասնակիցները նաեւ վճարվում են, բայց հետագայում եկանք եզրակացության, որ արդյունավետ չէ, եւ որոշեցինք այն դարձնել մեկամսյա եւ պարտադիր բոլորի համար»,- ասաց Փաշինյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 15-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

«Կոնվերս բանկ»-ն ընդլայնել է իր հիփոթեքային վարկատեսակների ցանկը՝ սկսելով էներգաարդյունավետ վերանորոգման ֆինանսավորում նաեւ պետական աջակցության ծրագրի շրջանակում:

Ծրագրի շրջանակում բանկն առաջարկում է վարկավորում՝ մինչեւ 10 մլն ՀՀ դրամի չափով, 7 տարի մարման ժամկետով: Սահմանամերձ բնակավայրերում տոկոսագումարը պետության կողմից սուբսիդավորվելու է ամբողջությամբ, իսկ այլ բնակավայրերում՝ մասամբ:

Վարկային հայտի ուսումնասիրության, վարկի տրամադրման, կանխիկացման, սպասարկման եւ այլ միջնորդավճարներ, ինչպես նաեւ տույժ՝ վարկի վաղաժամկետ մարման դեպքում, նախատեսված չեն: Գրավադրվող անշարժ գույքի ապահովագրությունը կատարվում է բանկի կողմից վարկի մնացորդային գումարի չափով:

Հեռախոսահամար՝ 010-511-211:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՆՈՐ ԱՆՎԱՆՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ արդեն հայտնի է միավորած համալսարանների նոր անվանումը: Այն կկոչվի Խաչատուր Աբովյանի անվան կրթական գիտությունների ինստիտուտ:

Հիշեցնենք, որ ԿԳՄՍՆ-ում գաղտնի նախագիծ է շրջանառվել, որով նախատեսում են փակել Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը, որի մասին երեկ հայտնել է Վ. Բրյուսովի պետական համալսարանի սոցիալական գիտությունների եւ սերվիսի ֆակուլտետի դեկան Ցոլակ Ակոպյանը:

«Այս «ժողովրդավար» կառավարության համար կարծես սովորական աշխատաոճ է դարձել կարեւոր որոշումների թաքուն ընդունումը: Ի դեպ, երեկ, երբ հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում էր ռեկտորի ընտրության մրցույթ հայտարարելու հարցը, օրակարգի հաստատմանը դեմ էին արտահայտվում կառավարության ներկայացուցիչները՝ բերելով այն փաստարկը, թե այս պահին շրջանառվում է բուհերի միավորման հարցը: Մեկ է, չէք կարողանալու մեկ որոշմամբ վերացնել 90-ամյա ավանդույթ ունեցող բուհը»,- գրել էր նա:

Ի դեպ, հավելենք, որ երեկվանից համալսարանի հարյուրավոր ուսանողներ դասադուլ եւ ստորագրահավաք են անցկացնում համալսարանի տարածքում:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

ԱՄԵՆԱՀՈՒՍԱԼԻ ԲԱՆԿԵՐԻՑ Է

Global Finance հեղինակավոր ամսագիրը հրապարակել է աշխարհի ամենահուսալի բանկերի ամենամյա վարկանշային աղյուսակը, որում «Ամերիաբանկ»-ը երկրորդ տարին անընդմեջ արժանացել է Հայաստանում «Տարվա ամենահուսալի բանկ» հեղինակավոր մրցանակին:

Global Finance ամսագրի կողմից հրապարակվող աշխարհի ամենահուսալի բանկերի ամենամյա ցանկն ավելի քան երեսուն տարի հանդիսանում է ֆինանսական ոլորտի գործընկերների հուսալիության ճանաչված եւ վստահելի չափանիշ: Հաղթողներն ընտրվել են Moody's, Standard & Poor's եւ Fitch գործակալությունների կողմից աշխարհի 1000 ամենախոշոր բանկերին տրված արտարժութային երկարաժամկետ վարկանիշների վերլուծության եւ գնահատումների հիման վրա:

«Ամերիաբանկ»-ի տնօրինության նախագահ - գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը մրցանակի կապակցությամբ նշել. «Մեծ պատիվ է Global Finanձe ամսագրի կողմից հերթական անգամ ճանաչվել Հայաստանի ամենահուսալի բանկը: Այս մրցանակը վերահաստատում է Հայաստանում «Ամերիաբանկ»-ի հանդեպ ձեւավորված վստահությունն ու համբավը: Այս ճանաչումը մեզ համար մոտիվացնող է, միաժամանակ պարտավորեցնող, որպեսզի պահպանենք մեր որդեգրած բարձր չափանիշները եւ մեր հաճախորդների համար մշտապես ապահովենք հուսալի եւ անվտանգ բանկային փորձառություն»:

Հավելենք, որ միջազգային ֆինանսական ոլորտում մասնագիտացած Global Finance հեղինակավոր ամսագրի կողմից այս տարի «Ամերիաբանկ»-ը արդեն իսկ արժանացել է մի շարք, այդ թվում՝ «Հայաստանի լավագույն բանկ» մրցանակին:

Global Finance

Global Finance ամսագիրը հիմնադրվել է 1987 թվականին, ունի 50,000 տպաքանակ 193 երկրում եւ տարածաշրջանում: Global Finance-ի ընթերցողների շարքում են կորպորատիվ եւ ֆինանսական ոլորտների բարձր պաշտոնատար անձինք, որոնք պատասխանատու են խոշոր միջազգային ընկերություններում եւ ֆինանսական հաստատություններում ներդրումային եւ ռազմավարական որոշումների կայացման համար: Ամսագրի կայքում (GFMag.com) ներկայացված են միջազգային ֆինանսական շուկաներում 35 տարվա փորձի արդյունքում մշակված վերլուծություններ եւ հոդվածներ:

Global Finance-ի գլխամասը գտնվում է Նյու Յորքում, իսկ ներկայացուցչությունները՝ ամբողջ աշխարհում: Global Finance-ը պարբերաբար ընտրում է լավագույն արդյունքներ ցուցաբերող առաջատար բանկերը եւ այլ ֆինանսական հաստատությունները: Այս մրցանակները դարձել են գերազանցության վստահելի չափանիշ աշխարհի ֆինանսական հանրության համար:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ»-ը Հայաստանի խոշորագույն ֆինանսական հաստատությունն է եւ ՀՀ տնտեսական ոլորտի առավել նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Հանդիսանալով դինամիկ զարգացող ունիվերսալ բանկ՝ «Ամերիաբանկ»-ն իր սպասարկման բազմաֆունկցիոնալ հարթակի միջոցով մատուցում է նորարարական բանկային ծառայությունների ընդարձակ փաթեթ՝ թվային պրոդուկտների հստակ շեշտադրմամբ:

Բանկն առաջնորդվում է հաճախորդամետ քաղաքականությամբ թվային ժամանակակից միջավայրում սպասարկման բարձր որակ եւ բանկային փորձառություն ապահովելու նպատակով: «Ամերիաբանկ»-ը որդեգրել է բիզնեսի պատասխանատու վարման քաղաքականությունը՝ նպաստելով Հայաստանի անցմանը դեպի կայուն ապագա:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԻՆՏԵՆՍԻՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

«Ակբա» բանկն ընթացիկ տարում էականորեն մեծացրել է բոլոր հիմնական ցուցանիշները. բանկը շարունակում է մեծ ինտենսիվությամբ ներդրումներ կատարել տնտեսության բոլոր ոլորտներում:

2022թ. առաջին 8 ամիսների ընթացքում բանկի կողմից տնտեսության բոլոր ճյուղերում տրամադրած վարկերի ծավալը կազմել է ավելի քան 173 միլիարդ 350 միլիոն ՀՀ դրամ, որը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է ավելի քան 31%-ով: «Ակբա»-ն նաեւ շարունակում է մնալ Հայաստանի տնտեսության գլխավոր ուղղություններից մեկի՝ գյուղատնտեսական ոլորտի ֆինանսավորման բացարձակ առաջատարը:

Միաժամանակ բանկը շարունակում է հետեւողական լինել Քովիդի եւ պատերազմի հետեւանքով տնտեսական վնասների վերականգնման աշխատանքներին: Տնտեսության «առողջացման» համար «Ակբա»-ն անհատական մոտեցում է ցուցաբերել բոլոր գործընկերներին՝ ներել է վարկեր, տրամադրել վարկային արձակուրդներ:

2020-ի սկզբից առ այսօր «Ակբա» բանկը ներել է շուրջ 4788 վարկ՝ ընդհանուր ավելի քան 2 միլիարդ դրամ ծավալով, ներել է շուրջ 4681 տույժ-տուգանք՝ ընդհանուր ավելի քան 1 միլիարդ 750 միլիոն դրամ ծավալով, իրականացրել է շուրջ 146,000 վարկի հետաձգում: Բանկը ներել է հայրենիքի պաշտպանների՝ պատերազմում զոհված եւ անհետ կորած զինծառայողների շուրջ 436 վարկ՝ ընդհանուր ավելի քան 250 միլիոն դրամ ծավալով:

«Հայաստան» համահայկական եւ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամներին, ինչպես նաեւ պատերազմի հետեւանքով առաջացած սոցիալական խնդիրների լուծման եւ Քովիդի հաղթահարման համար «Ակբա» բանկը, «Ակբա» ֆինանսական խմբի մյուս անդամները՝ «Ակբա Լիզինգն» ու «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթը», ընդհանուր առմամբ տրամադրել են ավելի քան 400 միլիոն ՀՀ դրամ:

Բանկն ակտիվ մասնակցել է նաեւ պետական աջակցությամբ գյուղատնտեսության սուբսիդավորման ծրագրին, նոր ինտենսիվ այգիների հիմնադրման գործընթացներին, նորագույն ջերմոցային տնտեսությունների եւ առհասարակ «կանաչ» եւ ինդուստրիալ գյուղատնտեսության, ռեսուրսների խնայողության նախագծերի իրականացմանը:

«Մեր ուշադրության կենտրոնում է տնտեսության վերականգնման պրոցեսը: Սկզբում Քովիդն էր, որը տնտեսական ընդհանուր պասիվություն բերեց, իսկ հետո՝ պատերազմը: Շատ բիզնեսներ փակվեցին, շատերն ընկան ֆինանսական ծանր վիճակի մեջ. վարկառուների՝ վարկերը մարելու հետ կապված հարցեր էին առաջանում: Ցուցաբերեցինք ինչպես խմբակային, այնպես էլ անհատական մոտեցում. ներել ենք վարկեր, աջակցել ենք, որ մարդիկ հետաձգեն մարումները: Պետք է շարունակենք աջակցել մեր բանակին, զինվորներին եւ այն մարդկանց, որոնք միացել էին հայրենիքի պաշտպանության գործընթացին: Այս առումով ներել ենք մեր հայրենիքի պաշտպանության համար նահատակվածների վարկային պարտավորությունները»,- նշում է «Ակբա» բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՏԵՎԱԿԱՆ ԴԱԴԱՐ

«ԵՍ ԻՆՔՍ ԻՆՁ ԵՄ ԽԱՂՈՒՄ». ԴԻԱՆԱ ՏՈՌԵՍ

Դերասանուհի Դիանա Տոռեսի հետ ArmLur.am-ը զրուցել է երկար դադարից հետո կրկին նկարահանվելու, «Կույր աշխարհ» հեռուստանախագծի եւ զբաղվածության մասին:

Դերասանուհու խոսքով՝ վերջին շրջանում ամենաքննարկված հեռուստասերիալում նկարահանվելու առաջարկը ստացել է երգիչ, դերասան Կարեն Ասլանյանի կողմից:

«Ինձ զանգեց իմ լավ ընկեր Կարեն Ասլանյանը եւ առաջարկեց մասնակցել բոլորի կողմից սիրված Դիանա Գրիգորյանի «Կույր աշխարհ» նախագծի քաստինգին: Իհարկե, սիրով համաձայնեցի մասնակցել, քանի որ այն կերպարը, որը պետք է խաղայի, ինձ շատ հոգեհարազատ էր, եւ այդպես անցա քաստինգը: Անկեղծ կլինեն. իրականում մեծ պատիվ է ինձ համար նկարահանվել այդքան տաղանդավոր դերասանների հետ: Նկարահանումներն անցնում են շատ ուրախ, դրական եւ հաճելի մթնոլորտում»,- մեզ հետ զրույցում նշեց Դիանան:

Դիանայի փոխանցմամբ՝ դժվար է եղել նրան տեւական դադարից հետո կրկին վերադառնալ նկարահանման հրապարակ, բայց նա կարող է հաղթահարել այդ փորձությունը. «Միակ դժվարությունը իմ համար երկար դադարից հետո նորից նկարահանվելն է, բայց փորձում եմ հաղթահարել, քանի որ այս ոլորտում ինձ զգում եմ, ինչպես ձուկը ջրում: Ստեղծագործական թիմը շատ պրոֆեսիոնալ է, եւ այդ թիմում աշխատելն ինձ համար միայն պատիվ է: Իսկ ինչ վերաբերում է կերպարիս, ապա կբնութագրեմ այսպես՝ բարի, անկեղծ, մի քիչ միամիտ աղջիկ: Հետաքրքիրն այն է, որ ինձ ճանաչողներն ասում են, որ ես ինձ եմ խաղում»:

Անդրադառնալով առաջիկա ստեղծագործական նորություններին՝ Դիանա Տոռեսն ընդգծում է, որ այս շրջանում համագործակցում է միայն «Կույր աշխարհ» հեռուստանախագծի հետ, իսկ հետագա պլանների մասին դեռեւս խոսել չի կարող:

«Առաջարկներ այլ հեռուստանախագծերից եւս ստացել էի եւ ստանում եմ, բայց այժմ աշխատում եմ միմիայն «Կույր աշխարհ» հեռուստանովելում»,-հավելեց դերասանուհին:

Հիշեցնենք, որ դերասանուհին մինչ այսօր Տաթեւ Սարգսյանի հետ դատական գործընթացների մեջ է: Նշենք, որ դերասանուհի Տաթեւ Սարգսյանը դիմահարդարներից մեկին գրել էր, որ չի ցանկանում՝ իր լուսանկարները հրապարակվեն Դիանայի լուսանկարների կողքին. դա իրեն պատիվ չի բերում: Դիմահարդարը դա ցույց էր տվել Դիանային: Այս նամակը, հայտնվելով Դիանայի ձեռքի տակ, զայրացրել է նրան, եւ վերջինս մի քանի հետաքրքիր եւ սկանդալային «բացահայտում» էր արել Տաթեւ Սարգսյանի մասին: Մասնավորապես, դերասանուհին, անդրադառնալով նրա բարոյականությանը, նշել էր, թե Տաթեւը «փողով դուրս է գալիս բիձեքի հետ»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ»

ԳՅՈՒՄՐԵՑԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԸ ՔՄԱՀԱՃ Է

Գյումրու երիտասարդական թատերախումբը, որը ներկայացումներով հանդես է գալիս «Մտորումների թատրոնում», միավորել է երեւակայություն, հետաքրքիր խառնվածք ունեցող երիտասարդների եւ թատերասերներին է մատուցում դասական ստեղծագործությունների ոչ սովորական մեկնաբանություններ:

Թատերախմբի հիմնադիր, ռեժիսոր եւ դերասան Արմեն Արշալույսյանը կարծում է՝թատերախումբը երազողների համար է, կանգառ է, որտեղ ստեղծագործելու եւ մասնագիտական ճանապարհ անցնելու նպատակով թատերախմբի շարքերը կհամալրվեն երիտասարդ ստեղծագործողներով:

Արմեն Արշալույսյանը միշտ է ցանկացել թատերախումբ հիմնադրել, սակայն ցանկությունն իրականացրել է 2021-ի նոյեմբերին: Նրա խոսքով՝ մշակութային հայրաքաղաքում վերջին տարիներին թատրոնի հանդեպ հետաքրքրությունն ու սերը մեծացել են: «Շատ է խոսվում այն մասին, որ գյումրեցի հանդիսատեսը քմահաճ է, խիստ, սակայն արվեստով շնչող ու ապրող քաղաքն առանց երիտասարդ արվեստագետների պատկերացնելը դժվար է: Ո՞վ պետք է ստեղծի նման թատրոն, եթե ոչ երիտասարդները»,- ասում է նա եւ հավելում՝ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Գյումրու մասնաճյուղն ամեն տարի տասն ուսանող է ավարտում եւ կանգնում է աշխատանք գտնելու խնդրի առաջ:«Գյումրու թատրոններում դերասանների մեծ պահանջարկ չկա: Մի մասը, ամեն դեպքում, սպասում է առաջարկի, մյուս մասը փորձում է մայրաքաղաքում գտնել իր տեղը: Հիմնականում 10-ից մեկին է հաջողվում մասնագիտությամբ աշխատել: Ո՞ւր են գնալու. կասեմ՝ Գյումրու երիտասարդական թատերախումբ»,- հասցեն նշում է նա: Թատերախումբը շուտով հանդես կգա առաջնախաղով: Բեմում կլինի «Վիկինգները՝ հսկայի քարանձավում» շվեդական հեքիաթի բեմականացված տարբերակը: Պրեմիերայից հետո խաղալու են Գյումրու «Մտորումների թատրոնում», հետո կսկսեն շրջագայությունները Շիրակի եւ այլ մարզերում:

ԼՈՒՐԵՐ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

MTV Europe Music Awards-ի (MTV EMA) այս տարվա մրցանակաբաշխության հավակնորդների ցուցակը հրապարակվել է 2022 թվականի հոկտեմբերի 12-ին: Ամենաշատը անվանակարգերը գլխավորում է Հարի Սթայլսը՝ յոթ տեղով, որին հաջորդում է Թեյլոր Սվիֆթը՝ վեցով, իսկ Նիկի Մինաժն ու Ռոզալիան՝ 5-ական անվանակարգով:

Մրցանակաբաշխությունը տեղի կունենա նոյեմբերի 13-ին Դյուսելդորֆում՝ PSD Bank Dome-ում, եւ ուղիղ եթերով կհեռարձակվի ավելի քան 170 երկրներում:

ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Քրիստինա Ագիլերայի՝ հոկտեմբերի 22-ին նախատեսված երեւանյան մենահամերգը հետաձգվել է: Այս մասին ասվում է «ՀԱՅԱ» փառատոնի ինստագրամյան էջում:

««ՀԱՅԱ» փառատոնը եւ սիրված երգչուհու անձնակազմը, կիսելով մեր երկրի քաղաքացիների հոգեվիճակը, որոշում կայացրին հետաձգել Քրիստինա Ագիլերայի մենահամերգը Երեւանում: Շուտով կհրապարակվի համերգի նոր ամսաթիվը: Բոլոր գնված տոմսերն ուժի մեջ են»,-նշված է հաղորդագրության մեջ:

ԱՋԱԿՑԵԼ Է ՔՐՈՋԸ

Քանյե Ուեսթը շարունակում է սկանդալների կիզակետում լինել: Վերջերս նա Փարիզի նորաձեւության շաբաթվա շրջանակում ներկայացրել էր իր հավաքածուն եւ այդ ընթացքում ներկայացել «Սպիտակների կյանքերը կարեւոր են» գրառմամբ մարզաշապիկով: Ավելի ուշ ռեփ կատարողի ինստագրամյան էջն արգելափակվել էր՝ աշխարհի մասին իր տեսակետների վերաբերյալ գրառումների փոնին: Քանյեն կոնֆլիկի մեջ էր մտել հնարավոր բոլոր մարդկանց հետ: Մոդել Բելլա Հադիդը նույնպես որոշել է անդրադառնալ այս ամենին եւ նշել է, որ իր ծննդյան տարեդարձը, որը հոկտեմբերի 9-ին էր, չի կարողացել վայելել:

«Ասել, որ վերջին երկու օրերին հեշտ է եղել նշել իմ ծննդյան տարեդարձը, կամ չմտածել այն բաների մասին, որոնք կատարվել են փողոցներում կամ ասվել են սոցիալական ցանցերում, ես կստեմ»,- գրել է մոդելը եւ նշել, որ մտադիր չէ աջակցել բռնությանը որեւէ ձեւով:

«Ես կշարունակեմ պաշտպանել անմեղ մարդկանց՝ անկախ նրանից, թե ով եք դուք կամ որտեղից եք գալիս: Հակասեմիտիզմը կամ ցանկացած անմեղ հրեայի հետապնդումը, ուր էլ որ դա լինի, բնական չէ», - նշել է Բելլան:

Նա կոչ է արել չլռել ցավի եւ ապրումների մասին՝նշելով, որ, ամեն դեպքում, ինչ որ պահի պետք է խոսել:

«Սերունդների տրավմա կա, երբ նրանց նախնիներին խոշտանգում են: Կան հրահրողներ, եւ ես այստեղ եմ, որպեսզի ասեմ, որ եթե ինչ-որ բան տեսնեք, խոսեք»,- ասել է Հադիդը եւ եզրափակելով իր խոսքը՝դատապարտել հակասեմականության ցանկացած դրսեւորում:

● *Հոկտեմբերի 15-ին The Dvin Hotel-ում տեղի կունենա «Գենետիկ կոդ» համերգ-փառատոնը: Տոմսերի արժեքը՝40000-140000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել դեղատնային գործունեության լիցենզավորման հայցի բավարարումից հետո:
Սիդա Պետրոսյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն սկսելուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դեղատանը (դեղեր պատրաստող եւ դեղեր չպատրաստող) աշխատանքն իրականացնող, համապատասխան որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի հետ կնքված աշխատանքային պայմանագրի պատճենները.

2) դեղատանը (դեղեր պատրաստող եւ դեղեր չպատրաստող) աշխատանքն իրականացնող, համապատասխան որակավորում ունեցող դեղագետի մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականի եւ վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականի, իսկ դեղագործի դեպքում՝ համապատասխան որակավորում ունեցող դեղագործի միջին մասնագիտական կրթության փաստը հավաստող վկայականը եւ վերջին հինգ տարվա ընթացքում վերապատրաստման վկայականը:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասազերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող որեւէ կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը,

4) Դեղատնային գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար էլեկտրոնային առողջապահության համակարգը սպասարկող օպերատորի հետ կնքված էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման եւ սպասարկման պայմանագրի պատճենը:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիցենզավորված անձի կողմից համապատասխան որակավորում ունեցող դեղագետի կամ դեղագործի, հագեցվածության փոփոխման դեպքում լիցենզավորված անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնին տեղեկացնում է իրականացված փոփոխության մասին՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ընդգրկվել որակավորված ներքին աուդիտորների ցանկում
Միսակ Հայրապետյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն կարող են դիմում ներկայացնել այն անձինք, որոնք ունեն՝

1. Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի միջազգայնորեն ճանաչված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորումը (Certified Internal Audit- CIA) կամ հանրային հատվածի աուդիտորի որակավորումը (Certified Government Auditing Professional - CGAP),

2) որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից անցկացված առնվազն բազային (ֆունդամենտալ) 9 քննության (F1-F9) արդյունքում տրված հաշվապահ-աուդիտորի որակավորումը,

3) հանրային ֆինանսների եւ հաշվապահության արտոնագրված ինստիտուտի (Chartered Institute of Public Finance Accountancy- CIPFA) կողմից տրված որակավորումը,

4) որակավորված հանրային հաշվապահների ամերիկյան ինստիտուտի (American Institute of Certified Public Accountants) կողմից տրված հանրային հաշվապահի որակավորումը (CPA),

2. Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի այլ կառույցների կողմից տրված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորումը,

2) Հայաստանի Հանրապետության հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից տրված աուդիտորի որակավորումը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դիմումին կից պետք է ներկայացնել՝

- անձնագրի պատճենը,
- համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Քաղաքացիները հետաքրքիր ցուցավահանակով հորդորում են մարդկանց աղբը չթափել շրջակա միջավայրում: Ցուցանակի հորդորին անսալով՝ մենք պետք է տարբերվենք պատկերված կենդանուց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.10.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: